



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

«03» 04 2025 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 093 - 25

Նախաձեռնող՝

«ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆ» ԲՀ
Երևան, Թումանյան փ. 21

Գործունեությունը՝

Ակունք համայնքի Ջովաշեն, Հատիս, Կոտայք և
Ակունք բնակավայրերում Հիսուս Քրիստոսի
մոնումենտալ արձան-համալիրի կառուցում
Կոպայքի մարզ

Առդիր՝ 8 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

ԲՓ № 093 - 25

«03» սեպտեմբեր 2025 թ.

Ակունք համայնքի Ջովաշեն, Հատիս, Կոտայք և Ակունք բնակավայրերում Հիսուս Քրիստոսի մոնումենտալ արձան-համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Գագիկ Ծառուկյան» ԲՀ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Ակունք համայնք Ջովաշեն, Հատիս, Կոտայք, Ակունք բնակավայրեր

Ներածական մաս. «Գագիկ Ծառուկյան» ԲՀ-ի կողմից նախատեսվում է Կոտայքի մարզի Ակունք համայնքի Ջովաշեն (19,7 հա), Հատիս (27,5 հա), Կոտայք (2,1701հա, 0,1315 հա, 0,5 հա), Ակունք (6 հա) բնակավայրերի Հիմնադրամին սեփականության իրավունքով պատկանող տարածքներում Հիսուս Քրիստոսի մոնումենտալ արձան-համալիրի (այսուհետ՝ Համալիր) կառուցում: Համալիրի կառուցումն իրականացվելու է Կոտայքի մարզի Ակունք համայնքի ղեկավարի կողմից 2025 թվականի հունվարի 13-ին տրված N ՆԹ-0099-25, 2024 թվականի սեպտեմբերի 3-ին տրված N 102, 2024 թվականի սեպտեմբերի 2-ին տրված N 103, 2024 թվականի դեկտեմբերի 6-ին տրված N 150 նախագծման թույլտվությունների պահանջներին համապատասխան:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ է: Փորձաքննությունն իրականացվել է Օրենքի պահանջներին համապատասխան:

Նկարագրական մաս. Համալիրը, որն իրենից ներկայացնում է 3 հարթակներից բաղկացած կառույց, նախատեսվում է տեղադրել Հատիս լեռան բարձունքներից մեկի վրա: 33 մետր բարձրությամբ քանդակը տեղադրվելու է 44 մետր բարձրությամբ պատվանդանի վրա: Հիմնական մոտեցումը դեպի Համալիրի տարածք նախատեսվում է ճոպանուղու վերին կանգառից:



Առաջին հարթակում (-5.7 նիշ) նախատեսված է սրճարան և այլ ծառայություններ այցելուների համար: Սրճարանին կից նախատեսված են սանհանգույցներ (նաև բնակչության սակավաշարժ խմբերի համար):

Երկրորդ հարթակում (0.0 նիշ) նախատեսված է ցուցասրահային հատված: Կից նախատեսված են սանհանգույցներ (նաև բնակչության սակավաշարժ խմբերի համար): Բոլոր հարթակներն իրար միանում են աստիճաններով և թեքահարթակներով: Վերին հարթակից նախատեսվել է մուտք դեպի պատվանդանի ներսի հատված: Վերին հարթակից մեծ թեքությամբ աստիճաններով հնարավոր է բարձրանալ պատվանդանի վերին մակարդակ:

Քանդակը նախատեսվել է այլումինե ձուլվածքով, որն ամրացվելու է մետաղական հիմնակմախքի վրա: Պատվանդանի ծավալում նախատեսված են մոտեցումներ մետաղական հիմնակմախքին: Կառույցը նախատեսվում է իրականացնել միաձույլ երկաթբետոնից տրավերտինե սալերից երեսպատումով: Համալիրում նախատեսված են դեկորատիվ հարթաքանդակներ:

Դեպի Համալիր նախատեսվում է կառուցել ճոպանուղի: Ճոպանուղու հողամասը գտնվում է Կոտայքի մարզի Ակունք համայնքի Կոտայք բնակավայրում, որի մակերեսը կազմում է 2,1701 հա, 0,1315 հա, 0,5 հա: Ճոպանուղու երկարությունը մոտ 3750 մ է, ունի 2 կայան: Առաջին կայանը տեղակայված է Կոտայքի մարզի, Ակունք համայնքի Կոտայք գյուղում: Երկրորդ կայանը նախատեսվում է Համալիրի մոտակայքում:

Ճոպանուղին ամբողջ երկարությամբ հենված է լինելու մետաղական աշտարակների վրա: Նախատեսվել է 22 հենարան, որոնց համար որպես հիմնատակ ծառայում են երկաթբետոնե կետային հիմքերը: Մետաղական աշտարակներն ունեն բրգաձև տեսք և առավելագույնը մինչև 24 մ բարձրություն:

Ճոպանուղին կարող է տեղափոխել մինչև 12 մարդ՝ ապահովելով մարդկանց հոսքը Կոտայք գյուղից դեպի Համալիր և հակառակ ուղղությամբ: Նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում: Մարդկանց շարժը իրականացվելու է միայն ճոպանուղու միջոցով: Գոյություն ունեցող գրունտային ճանապարհը խճապատվելու է, սակայն մեքենաների անցուդարձ նշված ճանապարհով չի նախատեսվում:

Նախատեսվող գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները ներկայացված են ստորև՝

Կառուցապատման մակերեսը նախատեսվել է Ակունք գյուղում՝ 4056 քմ, Զովաշեն գյուղում՝ 887 քմ, Հատիս գյուղում՝ 2153 քմ, Կոտայք գյուղում՝ 5000 քմ: Անջրանցիկ մակերեսներն Ակունք, Զովաշեն, Հատիս, Կոտայք գյուղերում զբաղեցնելու են համապատասխանաբար՝ 31944, 117313, 162847, 11816 քմ տարածք: Կանաչապատման մակերեսն, ըստ հաշվետվության, կազմելու է 4950 մ²:

Շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի սեպտեմբերի 16-ի N 372-Ն հրամանով հաստատվել է «Հատիս հրաբուխ» բնության երկրաբանական հուշարձանի անձնագիրը: «Հատիս հրաբուխ» բնության երկրաբանական հուշարձանի անձնագրի համաձայն՝ սահմանվել են Հատիս լեռան վրա գտնվող 9 երկրատեղանքների սահմանները և հատակագծերը: Նշված 9 երկրատեղանքները հանդիսանում են



բնության հատուկ պահպանվող տարածքներ և «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ ենթակա են պահպանության բնության հուշարձանի պահպանության ռեժիմին համապատասխան: Հիսուս Քրիստոսի մոնումենտալ արձան-համալիրը նշված երկրատեղանքների սահմանագծից գտնվում է մոտ 5-125 մ հեռավորության վրա: Երկրատեղանքների վրա ազդեցություններից խուսափելու նպատակով իրականացվելու են կանխարգելիչ միջոցառումներ՝ բնության հուշարձանի երկրատեղանքի սահմանին կից տարածքներում տեղադրվելու են հատուկ նշաններ և ցուցանակներ, որոնց միջոցով աշխատակիցները և զբոսաշրջիկները կտեղեկացվեն, բնության հուշարձանի երկրատեղանքի վերաբերյալ: Երկրատեղանքների շրջակայքում աշխատանքները կիրականացվեն ժամանակակից տեխնիկական միջոցներով՝ բացառելով բացասական ազդեցությունը պահպանվող տարածքների վրա:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Տարածքում իրականացվելու է սիզամարզի ցանք, տնկվելու են ծառեր և թփեր: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ բուսականությամբ, կանաչապատման նախագծի համաձայն, որը համաձայնեցվելու է Ակունքի համայնքապետարանի հետ:

Շինարարության տևողությունը սահմանվել է 36 ամիս:

Համալիրի կառուցման ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու-կենցաղային նպատակների համար:

Շինարարության փուլում ջրցանման համար անհրաժեշտ ջուրն ապահովելու նպատակով համապատասխան փաստաթղթերի փաթեթը ներկայացվելու է լիազոր մարմին՝ ջրօգտագործման թույլտվություն ստանալու նպատակով: Աշխատողների կոմունալ-կենցաղային պայմաններն ապահովելու նպատակով տեղադրվելու են բիոզուգարաններ, որոնք աշխատանքների ավարտից հետո ապամոնտաժվելու են: Խմելու ջուրը մատակարարվելու է տարաներով:

Շահագործման փուլում ջրամատակարարումը և ջրահեռացումը նախատեսվում է իրականացնել համաձայն տեխնիկական պայմանի:

Համալիրի ջրամատակարարման հաշվային ելքերի համար ելակետային տվյալներ են հանդիսացել սպառողների թիվը, որով պայմանավորված կլինի նաև սանիտարական սարքերի քանակը:

Մոնումենտալ արձան-համալիրի արտաքին և ներքին հրդեհամարման համար անհրաժեշտ ջրի քանակությունն ապահովելու նպատակով նախատեսվել է հակահրդեհային հիդրանտի հոր՝ ստորգետնյա բարձր տեղադրման հիդրանտով:

Շահագործման փուլում նախատեսվել է կենցաղային կեղտաջրերի մաքրում մինչև ոռոգման ջրի որակի ցուցանիշներ: Այդ նպատակով տեղադրվելու է 2 կենսաբանական մաքրման կայան: Մաքրված ջուրն օգտագործվելու է կանաչապատ տարածքների ոռոգման նպատակով:



Շինարարության և շահագործման փուլերում էլեկտրամատակարարումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի: Տարածքի էլեկտրամատակարարումն իրականացնելու նպատակով կառուցվելու է 6300 կՎԱ հզորությամբ 35/10 կՎ ենթակայան՝ համաձայն լիցենզավորված կազմակերպության կողմից իրականացված նախագծի:

Կառուցապատման տարածքից մոտակա բնակավայրը գտնվում է մոտ 1,44 կմ հեռավորության վրա: 1 կմ և ավելի հեռավորությամբ ջրային ռեսուրսներ առկա չեն:

Գեոմորֆոլոգիական տեսակետից նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Հատիս լեռան գագաթին, որը հանդիսանում է չորրորդական հասակի հրաբուխ և ունի 2528,6 մ բացարձակ բարձրություն:

Համաձայն տարածքում իրականացված ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների արդյունքների՝ հիդրոերկրաբանական տեսակետից տեղամասում մինչև 25,0 մ խորությամբ փորված հորատանցքերում ստորգետնյա ջրեր չեն դիտարկվել, ստորգետնյա ջրերը տեղակայված են ավելի խորը հորիզոններում, իսկ վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական երևույթները և պրոցեսները (սողանք, կարստ, և այլն) տեղամասում բացակայում են:

Համաձայն հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության՝ կառուցապատման անմիջական տարածքում կարմիրգրքյան կենդանիներ և բույսեր չեն դիտարկվել:

Շահագործման փուլում օդային ավազանի վրա էական ազդեցություններ չեն կանխատեսվում:

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսվել է՝

- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս;
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով,
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,
- շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով,
- շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ,
- հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ,
- ցանկապատել շինարարական հրապարակները,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:

Շինարարության համար անհրաժեշտ բետոնախաստուրրը բերվելու է պատրաստի վիճակում՝ մասնագիտացված բետոնախաստուրրի մեթոդով:



Թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացվելու է «Թափոնների մասին» օրենքի պահանջներին համապատասխան: Գործունեության ընթացքում իրականացվելու է գոյացող, օգտագործվող, այլ անձանց կամ լիցենզավորված կազմակերպության փոխանցվող, ինչպես նաև տեղադրվող թափոնների սկզբնական հաշվառում: Ներդրվելու է թափոնների կառավարման համակարգ և իրականացվելու է աղբի տեսակավորում: Շինարարական աշխատանքերի ընթացքում առաջացող թափոնատեսակները կհավաքվեն աղբահավաք կոնտեյներներում և սահմանված կարգով կտեղափոխվեն մոտակա աղբավայր:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով իրականացվելու են համապատասխան միջոցառումներ՝ հողի վրա թափոնների և շինարարական աղբի տեղադրման բացառում, շինարարական տեխնիկայի և սարքավորումների լիցքավորում և սպասարկում մասնագիտացված կետերում և այլն: Աշխատանքների ավարտից հետո իրականացվելու է լանդշաֆտի վերականգնում և թեք լանջերի ամրացում:

Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավվելու են ժամանակակից, աղմուկի ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,
- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործվելու են սարքին վիճակում,
- պարբերաբար կստուգվեն և կկարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները:

Շինարարական աշխատանքների կատարման և շահագործման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվել են մի շարք միջոցառումներ:

Մոնումենտալ արձան-համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդն աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ և ըստ անհրաժեշտության,
2. փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա դրական ջերմաստիճանի դեպքում (շոգ և չոր եղանակներին) օրական 2-3 անգամ,
3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
4. աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ, անհրաժեշտության դեպքում ավելի հաճախ,



5. կենսաբազմազանության մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ՝ համապատասխան մասնագետի ներգրավմամբ:

Շինարարության փուլում բնապահպանական միջոցառումների համար (ներառյալ մշտադիտարկումների իրականացումը) նախատեսվում է 2780000 ՀՀ դրամ:

Շահագործման փուլում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցություններից խուսափելու նպատակով նախատեսվում է՝

1. տարածքում տեղադրել մթնոլորտային օդի մոնիտորինգի սարքավորումներ, իրականացնել մթնոլորտային օդի մշտադիտարկում ամենօրյա ռեժիմով և արդյունքները հասանելի դարձնել այցելուներին,

2. իրականացնել կենսաբանական մաքրման կայանից դուրս եկող ջրի լաբորատոր հետազոտություններ համապատասխան մասնագիտական կառույցի ներգրավմամբ՝ տարեկան մեկ անգամ,

3. կանխարգելիչ նպատակով տարեկան մեկ անգամ իրականացնել հողի որակի մոնիտորինգ՝ նաև հնարավոր սողանքային երևույթների կանխման նպատակով,

4. էկոլոգիական միջոցառումների կազմակերպման միջոցով այցելուներին տեղեկացնել բնության հուշարձանների և դրանց պահպանության կարևորության մասին,

5. իրականացնել աղմուկի մշտադիտարկումներ՝ պարբերաբար,

6. իրականացնել կենսաբազմազանության մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ, այդ նպատակով ներգրավել համապատասխան մասնագետների՝ հատկապես կարմիրգրքյան բույսերի և կենդանիների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և դրանց պահպանությունը պատշաճ իրականացնելու նպատակով:

Նախատեսվում է շինարարական աշխատանքները կազմակերպել կենդանիների և թռչունների բնադրման, ձվադրման ժամանակաշրջանից դուրս և ապահովել պաշտպանական միջոցառումների իրականացում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պատճառաբանական մաս. Փորձաքննության գործընթացում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով ազդակիր բնակավայրերում (Ձովաշեն, Հասիս, Կոտայք, Ակունք) անցկացվել են հանրային լսումներ, որի ընթացքում մասնակիցները հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Շինարարության և շահագործման փուլերում բացվելու են աշխատատեղեր: Նախաձեռնողը պարտավորվել է աշխատանքների իրականացմանը ներգրավել համայնքի բնակիչներին, ինչպես նաև մասնակցել համայնքի զարգացման ծրագրերի իրականացմանը, ֆինանսական աջակցություն ցուցաբերել համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման նպատակով: Շինարարության փուլում բացվելու է մոտ 70 աշխատատեղ և աշխատանքների իրականացման համար ներգրավվելու են ազդակիր համայնքի բնակիչները: Շահագործման փուլում ևս բացվելու է մոտ 150-160 աշխատատեղ, ինչը հեռանկարում, կախված աշխատանքների ծավալից, հնարավոր է ավելացվի: Աշխատանքների իրականացման համար հիմնականում ներգրավվելու են համայնքի բնակիչները: Աշխատավարձը նախատեսվում է 120000-350000 ՀՀ դրամ՝ կախված զբաղեցրած հաստիքից:

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքում գրոսաշրջային հոսքերի ավելացման շնորհիվ կզարգանա տնտեսությունը և կլուծվի հնարակից բնակավայրերի մարդկանց



զբաղվածության խնդիրը: Կարգանա տեղական մթերքների առևտուրը, տարածքի բնակիչները կարող են առաջարկել բազմաթիվ ծառայություններ: Նշված փոփոխությունները դրական ազդեցություն կունենան հատկապես ազդակիր համայնքների բնակչության սոցիալական վիճակի վրա:

Փորձաքննական գործընթացում հաշվետվության վերաբերյալ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով պետական մարմիններից և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ, որոնք հաշվետվությունը լրամշակելիս հաշվի են առնվել Հիմնադրամի կողմից:

Բնապահպանական բոլոր միջոցառումներն արտացոլված են բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների իրականացման պլաններում:

Փորձաքննական պահանջներ

Գործունեության ընթացքում անհրաժեշտ է ապահովել հետևյալ փորձաքննական պահանջների կատարումը.

1. շինարարության փուլում շինարարական հրապարակից դուրս փոշու տարածումը կանխարգելելու նպատակով առաջնորդվել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով (շինարարական հրապարակը ցանկապատել, ջրցանել, սորուն նյութերը և հողային զանգվածները ծածկել անթափանց թաղանթով, բացառել շինարարական աղբի կուտակումները տարածքում, շինարարական աղբը և սորուն նյութերը տեղափոխել փակ ծածկով մեքենաներով՝ հատուկ սահմանված երթուղիներով և հատուկ վայրեր և այլն),

2. առաջնորդվել «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի 19-րդ հոդվածի և շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի սեպտեմբերի 16-ի N 372-Ն հրամանի պահանջներով,

3. շինարարության և շահագործման ընթացքում բացառել «Հատիս հրաբուխ» բնության երկրաբանական հուշարձանի երկրատեղանքների և դրանց պահպանական գոտիներում որևէ միջամտություն և ազդեցություն, երկրատեղանքների պահպանության նպատակով տարածքում տեղադրել ճանաչողական ցուցանակներ և նշաններ,

4. շինարարության ընթացքում առաջացող թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Շահագործման փուլում ներդնել թափոնների կառավարման համակարգ, տարածքում տեղադրել աղբի տեսակավորման համար նախատեսված աղբամաններ, բացառել աղբի կուտակումները տարածքում,

5. բուսական աշխարհի օբյեկտների պահպանության նպատակով առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով,

6. ապահովել հաշվետվությամբ ներկայացված բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների պլաններում նախատեսված բոլոր միջոցառումների իրականացումը



(օդի որակ, հողի որակ, ջրային ռեսուրսներ, կենսաբազմազանություն, աղմուկի և թրթռման մակարդակներ),

7. աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջներով:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Գազիկ Ծառուկյան» ԲՀ-ի կողմից Կոտայքի մարզի Ակունք համայնքի Զովաշեն, Հատիս, Կոտայք և Ակունք բնակավայրերում Հիսուս Քրիստոսի մոնումենտալ արձան-համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Քրիստինե Հարությունյան